**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-14/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ(ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան

22-ը սեպտեմբերի 2017թ.
ժամը 11[00]

*Ի գիտություն. պատվիրատուի ղեկավարի 19.09.2017թ. N436/ԴՎԱ հրամանով հանձնաժողովի գանահատող անդամ ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության ավագ սպա, մայոր Ա. Հակոբյանի գործառույթներն իրականացնելու է ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա լեյտենանտ Ս. Նիկոյանը:*

**Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան,
**գնահատողներ՝**
ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի պետի խորհրդական-իրավաբան Ս. Կեգիշյան,
ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի թիկունքային ապահովման վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔԾ 1-ին դասի խորհրդական Գ. Ուստյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա լեյտենանտ Ս. Նիկոյան
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության նորմատիվ իրավական ապահովման բաժնի առաջատար մասնագետ, քիծ 3-րդ դասի խորհրդական Ն. Արշակյան,
**Գնումները համակարգող՝**
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ռ.Մարդոյան:

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-14/1» ծածկագրով հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

*(Ռ. Մարդոյան)*

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2.«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-14/1» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4.Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-14/1» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

(Ռ. Մարդոյան)

**1.1** ՀՀ ՊՆ կարիքների համար «**Ռազմական ոլորտում գիտական հետազոտության և փորձարարական մշակման**» ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-14/1» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

| Հ/հ | Մասնակցի անվանում |
|---|---|
| 1. | «ԵՊՀ» Հիմնադրամ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**2 . « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-14/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

2.1 Մասնակցի էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակցի էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակցի հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-14/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ՝ ներքոհիշյալ դեպքի՝

«ԵՊՀ» Հիմնադրամի կողմից ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին՝ մասնավորապես հրավերի N 8 հավելվածին (տուժանքի մասին համաձայնագիր) կից ներկայացված վճարման պահանջագրի 13-րդ տողում արժույթը բառերով և կոդով լրացված չէ, բացի այդ մասնակցի կողմից ստորագրվել և կնիք է դրվել 19ա դաշտում, որը նախատեսված է «Շահառուի» ստորագրման համար, ինչը չի համապատասխանում պահանջագիրը լրացնելու համար հրավերով պահանջվող կարգին:

**3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին**

(Ռ. Մարդոյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

| Հ/հ | Գնման ենթակա ծառայության անվանումը | Չափի միավորը | Քանակը | Նախահաշ. գինը (դրամ) | «ԵՊՀ» Հիմնադրամ | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | ԱԱՀ-ով | ԱԱՀ | Առանց ԱԱՀ |
| 1 | Ռազմական ոլորտում գիտական հետազոտության և փորձարարական մշակման ծառայություններ | հատ | 10 | 2,340,000 | 2,340,000 | 390,000 | 1,950,000 |

3.2 Մասնակցի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց ընթացակարգը հայտարարել չկայացած /Հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին/:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ) — Վ. Գասպարյան,

Գնահատող — Ս. Կեգիշյան

Գնահատող — Գ. Ռստյան

Գնահատող — Ս. Նիկոյան

Գնահատող — Ն. Արշակյան

Գնումները համակարգող՝ — Ռ. Մարդոյան